

Դ Ե Լ Ի Յ Ո Վ Ա Կ Ի Մ

(Շար .)

— 00 —

Մէնդլի Գիրէյ խանը ծախսապատիկ նստած էր պալատի դահլիճում, ընկկղմուած մօայլ մտածմունքների մէջ:

Նրա մագաղաթեայ երեսի վրայ աչքի էին ընկնում խոր կնճիռներ, որոնք խառնուելով իրար հաւաքում էին կոպերի մօտ եւ անցնում էին նրա նեղ, ճիշդ թաթարական ճակատը, թողնելով այնտեղ խոր ակօսներ:

Նրա հանդէպ, ձեռքերը խաչած կրծքին, կանգնած էր նրա սիրելին, նրա խորհրդականը, ծերունի Թիմուր, եւ լուռ նայում էր խանին:

— Ի՞նչն է քեզ մաշում, ո՞վ, խան, խնդիրը պարզ է. Զենովացիները եւ Հայերը օրէ օր զօրանում են, նրանց հարստութիւնը, նրանց անառիկ բերդերը, նրանց լաւ կազմակերպւած զօրքը, — այդ ամենը մի օր կարող է տապալել քո դահլիճը, քո տէրութիւնը, լսի՛ր ինձ, Մէնդլի, պէտք է օր առաջ մտածել այդ ահաւոր վտանգի մասին...:

— Դու կարծո՞ւմ ես, Թիմուր...

— Ապրա՛ծ կենաս, խան, տեսնո՞ւմ ես այս ալեղարդ գլուխս, կոացած մէջքս, այս զոդ-դոջուն ձեռքերս. օ՛, օ՛, չառ բան անցել գնացել է գլխովս, չառ բաներ տեսել եմ ես երկա-րատեւ կեանքումս, փա՛ռք ամենակարող Ալ-լահին, ես ունիմ փորձառութիւն եւ տեսնում եմ որտեղից է փչում քամին:

— Եւ ի՞նչ պէտք է անել քո կարծիքով, Թիմուր:

Եւ խանի նեղ, նշաճեւ աչքերի հայեացքը սուր ասեղի նման մեխուեց Թիմուրի աչ-

քերում:

— Հարկաւոր է բաժանել Զենովացիներին Հայերից, հարկաւոր է երկպառակութիւն ձեռքի նրանց մէջ, հարկաւոր է դիմել մերօնց...

— Եւ ովքե՞ր են այդ մերօնքը:

— Օսմանցիները, խան:

Պալատի դահլիճում տիրեց սուսունքը:

— Հա՛, հա՛, հա՛, ... Օսմանցիներ՛ը... ու ծերացել ես, Թիմո՛ւր, քաւթառացել ես... Գիտե՞ս, ինչ գնով նրանք կը յօժարանան ծախել ինձ վրայ այդ օգնութիւնը:

Եւ խանը կրկին ձգեց Թիմուրի վրայ խոր թափանցող հայեացքը:

— Հասկացիր, քաւթա՛ւ, Օսմանցիները կամենում են տիրել մեր երկրին, դարձրնել ինձ, խանիս, Սուլթանի հպատակը:

Խանը վերկացաւ գորգերով զարդարւած տախտից եւ դնելով ձեռքը մէջքին սկսեց արագ արագ շափել դահլիճը:

— Ո՛չ, Թիմուր, քո խորհուրդը ես չեմ կարող ընդունել. շմոռնաս, իմ երակներին մէջ հոսում է մեծն Զինգիլի արիւնը. մենք, Գիրէյ-ներս, ծնուել ենք խաներ եւ խաներ էլ կը մեռնենք. այս դահլիճ ես ստացել եմ նախնիքներից եւ նրան կը թողնեմ Օսման որդուս:

— Իսկ Ռո՞ւսը, խան, նա նոյնպէս կամե-նում է տիրել մեր երկրին եւ Սեւ Ծովի եզերք-ներին. ո՞րն է լաւ, լինել հպատակ մեր կրօնա-կից Օսմանցիներին, թէ այդ անհաւատ Ռուս-ներին:

Կրկին ծանր լռութիւնը տիրեց դահլիճում:

— Կայ մի ուրիշ միջոց եւս, նկատեց թիւ մուր:

— Ասա՛, ո՞րն է:

— Պէտք կը լինի կապուել Զենովացիների հետ ազգակցական կապերով:

— Ի՞նչպէս ... այդ գեաւուրնե՞րի հետ:

— Հարկաւոր կը լինի որդուդ կնութեան առնել Զենովացի մեծ իշխանի դուստրը:

— Քրիստոնեայ մի աղջիկ ... դու ցնդուել ես, թիմուռ, ի՞նչ կ'ասէ ժողովուրդը:

— Նա կը լռէ, խան:

— Իսկ հոգեւորականութիւնը ... մի մուսնար մեր մօլլաների հօր ոյժը, նրանց Փանատիզմը, նրանց ազդեցութիւնը ժողովրդի վրայ:

— Թող ինձ այդ ամենը. ես կը խօսիմ մեծ մօլլայի հետ: Ոսկին, խան, աւելի զօրեղ է, քան մոլեռանդ մօլլաները եւ նոյն իսկ ամբողջը:

Մէնգլի Գիրէյը ընկաւ մտաւորանքութեան մէջ: Պալատի դահլիճի բաց պատուհանից ներս էին թափուում արեւի ճառագայթները եւ ոսկեղօծ ցոլքերով խաղում էին թանկագին խալիլաների, դունաւոր նկարների, թաւշեայ վարագոյրների եւ պատից կախ տուած փայլուն զէնքերի վրայ. դով քամին բերում էր պարտէզից զարդերի բուրմունքը եւ լցնում ամբողջ դահլիճը:

Սանը դանդաղ, մտախոհ մօտեցաւ պատուհանին, յենուեց, երկար նայեց պարտէզի դոյնդոյն ծաղիկներին, վարդերին, չուշաններին, մեղմ կարկաչող շատրուանին, տարաւոսկրուտ ձեռքը խորշոմած ճակատին, քանիցս չփեց եւ դանախով թիմուռին, նկատեց:

— Ես ընդունում եմ խորհուրդդ. ուրիշ ելք չկայ. եթէ այդ ամուսնութիւնը անցնի խաղաղ եւ անվրդով, ես արքայօրէն կը վարձատրեմ քեզ, թիմուռ:

— Սան, ապրած կենաս, ծերունի թիմուռի մէկ ոտքը գերեզմանումն է. նրան ոչինչ պէտք չէ, ոչ դանձ, ոչ հոգեր: Քո երջանկութիւնը, քո ապահով կացութիւնը, քո իշխանութեան ա-

մուր եւ անասան յարատեւութիւնը որդւոց որդի, — ահա այն միակ պարզեւր, որի ծարաւը ես զգում եմ իմ ծերացած սրտում:

Մէնգլի Գիրէյի նեղ, նշաձեւ աչքերում երեւաց արցունքի մի կաթիլ, որ դողացող թերթերունքների տակից հոսաց նրա թշի վրայով եւ կորաւ նրա նեղ, կապտած շրթների ծալքերում:

— Իմ հաւատարիմ թիմուռ ...:

Եւ խանը դրեց ձեռքը ծերունու ուսին ու համբուրեց նրա ճակատը:

Իսկ բաց պատուհանից անվերջ, անդադրում լցում էին ներս վարդերի սուր բուրմունքը, սոխակների կրակոտ դայլայլիկները եւ մօլլաների երեկոյեան աղօթքի մրմունջները:

Հեռուից մոյգ կապոյտի մէջ երեւում էին լեռները:

Առաւօտեան մշուշը դեռ պատել էր նրանց դադաթները եւ մերկ, ապառաժոտ կողերը: Բոպէ առ բոպէ արեւի տաք ճառագայթներից այդ մշուշը նօսրանում էր, տեղ տեղ պատրուում, ցրում եւ կորչում:

Լեռների կանաչադարձ լանջերը ողողւած էին արեւի պսպղուն ցոլքերով եւ խորհրդաւոր անտառը սեւին էր տալիս առաւօտեան կապուտակի մէջ:

Ս. Նշան վանքը տանող ճանապարհով դրնում էր Դէլի Յովակիմը: Զգած լայն ուսին հնամաշ բաձկոնը, նա արագ արագ ընթանում էր առաջ: Նրա երեսը խոժոռ ու տրտում էր:

Մի միտք տանջում էր նրան. մի նոր երեւոյթ անկոչ մտել էր նրա մինչ այդ խաղաղ, անդորր կեանքը, տակնուվրայ էր արել նրա պարզ աշխարհայեցողութիւնը եւ ստիպել էր նրան ապրել նոր, անսովոր, մաշող ապրումներով:

Դրա պատճառը Մառչեւլան էր:

Նրա հետ ծանօթանալու առաջին իսկ օրից Դէլի Յովակիմը կորցրել էր հոգեկան հանգիստը, քունը, ախորժակը:

Մատչելիան, միայն նա, կենդանի, միշտ եւ հանապազ կանգնած էր նրա աչքերի առաջ: Դէլի Յովակիմը տեսնում էր, երեւակայում էր նրան ամէն տեղ, իւր անշուք սենեակում, եկեղեցում սրբերի պատկերների վրայ, Հայոց բերդում, երբ զբաղւած էր լինում իբրեւ օնպաշի զինուորական պարապմունքներով, փողոցներում, ծովի ափին, ամեն, ամեն տեղ:

Արար աշխարհում նա տեսնում էր միայն Մատչելիոյի չքնաղ, քնքոյշ դէմքը, նրա թշերի թէթեւ, վարդագոյն կարմիրը, նրա շրթների դմալիւն ժպիտը եւ նրա նախշուն աչքերի փայփայող կրակը:

Ամեն տեղ նա լսում էր նրա քաղցրահնչիւն ձայնը, նրա ծիծաղի մարդատաշար կարկաչը:

Եւ այժմ, գնալով փոշիոտ ճանապարհով, սրեւի կիլիկ ճառագայթների տակ, նա անդադար մտածում էր Մատչելիայի մասին:

— Հրեշտակ է նա, երկնային հրեշտակ ... բայց քեզ ի՞նչ, յանկարծ կտրեց նա իւր երազոտ մտածմունքների թելը, քեզ ի՞նչ, դու ո՞վ, նա ո՞վ ... է՛հ, ի դուր չէ, որ մարդիկ քեզ դէլի են ասում ... նա ազնուական տոհմից, Ջենովացի աղջիկ, սինեօսա ... իսկ դու ... դու ... մի հասարակ օնպաշի. հա՛, հա՛, հա՛, չէ, այդ մէկը չեղաւ:

Եւ նա անդօր կռացնում էր զլուխը լայն կրծքին:

— Ի՞նչ արած, չարունակում էր նա մի վայրկեանից, ի հարկէ, ես անարժան եմ նրա եղունգին անգամ, բայց ո՞վ կարող է արգիլել ինձ լուռ ու մունջ սիրել նրան, երազել նրա

Այդ հարցը, կարծես, հանգիստ տուեց նրա մասին, ո՞վ ...:

ալիկոծ հոգուն: Եւ երբ նա հասաւ Ս. Նշան վանքը եւ անցնելով կամարակապ դարպասից մտաւ մեծ, լայն բակը ու մօտեցաւ վանքի աղբիւրի աւազանի քանդակազոր զոններին, նա ջերմեռանդութեամբ խաչակնքեց երեսը եւ սկսեց լուռ աղօթել խաչքարի առաջ. նա աղօթում էր Մատչելիայի համար, նրա բաղդաւորութեան, երջանկութեան համար:

Աղօթքը վերջացնելուց յետոյ Դէլի Յովակիմը նայեց շուրջը:

Արեւի պայծառ ճառագայթները ողողել էին ամբողջ վանքը, նրա քարտաշ պատերը, փոքրիկ «հող տները»^(*) եւ բակի քառակուսի մեծ քարերը, որոնց արանքներից դուրս էր նայում կանաչ արօտը:

Աղանձները երամներով նստած էին դանդակատան ցեքերի վրայ, սաւառնում էին պարզ, կապուտակ եթերքում եւ կամ հանգիստ, անվախ ման էին գալիս վանքի բակում, լցնելով օդը իրենց անդադրում մնչումներով:

Դէլի Յովակիմը ուղղեց քայլերը դէպի «հող տներ» եւ մտաւ նրանցից մէկը:

Այնտեղ մեծ նկարչատախտակի առաջ նստած էր ծերունի միարանը եւ վերջացնում էր Տիրամօր իւզաներկ պատկերը:

— Աստուած օգնական, հայր սուրբ, արա՛սանեց Յովակիմը եւ համբուրեց ծերունու աչքը:

Ծերունին նայեց կլորակ ականոցների վրայով, ժպտաց եւ մի կողմ դնելով վրձինը, արա՛սանեց.

— Աստուծու օրհնութիւնը քո վրայ, որդի, վերջապէս յիշեցիր ինձ, Յովակիմ ... Նստիր:

Յովակիմը մնաց կանգնած:

— Հր՞ ... ի՞նչ կայ աշխարհումս, որդի:

— Կրկին նոյնը, հայր սուրբ:

— Խաղա՞ղ էք ապրում Ջենովացիների հետ:

— Վնաս չունի ... հաշտ ենք:

— Իսկ ձիգուխտները անհանգիստ չե՞ն անում ձեզ:

— Զիգուխտները ...

— Լսել եմ, Հոռիմի Պապը կամենում է Հայերին կաթոլիկ դարձնել:

— Է՛հ, բան չունես ... խելքին դօւ է տալիս:

(*) Այդպէս կոչւում էին վանքի խուցերը:

— Քանի մը հայ ազնուականներ արդէն ուրացել են իրենց նախնիքների սուրբ հաւատը :

— Դրանց կարելի է մատնելով համարել . բուն ժողովուրդը, հայր սուրբ, հաւատարիմ կը մնայ իւր եկեղեցւոյն, մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորչին :

— Անշուշտ, որդի, եւ ի՞նչպէս կարող էր լինել այլապէս, մեզ պահպանողը, մեզ իրար կապողը, ապրեցնողը մեր սուրբ եկեղեցին է . յիշո՞ւմ ես, երբ Սիւնեաց իշխան Վասակը ուրացաւ եւ ընդունեց Պարսիկների մազդեզանց կրօնը, Մեծն Վարդան փրկեց Հայութիւնը, ներկելով իւր արիւնով Աւարայրի դաշտը ...

— Այո՛, մեքենայարար շշնաց Յովակիմը :

Նրա աչքերում ծերունու նկարած Տիրամայրը սկսեց կամաց կամաց ընդունել Մառչելլայի կերպարանքը, ահա նրա նախնուն աչքերը, նրա կլորակ ճակատը, յոնքերը, նրա հըպարտ շրթները :

Եւ Դէլի Յովակիմը մեխել էր հայեացքը պատկերին :

— Հաւանո՞ւմ ես նկարս, Յովակիմ :

— Այո՛, սթափուեց Յովակիմը, իւր կոշտ ձեռքով տրորեց աչքերը եւ աւելացրեց .

— Հայր սուրբ, եկել եմ քեզ մօտ խոստովանանքով ...

— Ասա, զաւակս :

— Օգնիր ինձ, հայր սուրբ, հոգիս տանջւում է :

— Հոգի՞դ ... ինչի՞ց :

— Է՛հ ... երկար պատմութիւն է :

Եւ Դէլի Յովակիմը լռեց :

Ծերունին վեր կացաւ ցածր նստարանից, մօտեցաւ Յովակիմին, դրեց ձեռքը նրա ուսին, երկար նայեց նրա աչքերին եւ արտասանեց .

— Դու սիրո՞ւմ ես մէկին :

— Այո :

— Ո՞վ է նա :

— Մի Զենովացի, որի եղբօր կեանքը ես փրկեցի :

Ծերունին մի րոպէ մնաց լուռ :

— Մոռացիր նրան, ջնջիր սրտիցդ, ջրնջիր խապառ, խրոխտ ձայնով արտասանեց միաբանը :

— Բայց այդ վեր է իմ ուժերից ... չեմ կարող . շատ աշխատեցայ, բայց ի զուր ... :

— Սուտ է . մարդ, եթէ ուզենայ, կարող է հասնել ամեն բանի :

— Օգնիր ինձ, հայր սուրբ :

— Չոքիր, խստիւ հրամայեց արեղան :

Դէլի Յովակիմը ծունր խոնարհեց հողէ յատակի վրայ :

Արեղան դրեց աջը նրա գլխին, յառեց աչքերը դէպ ի վեր եւ սկսեց լուռ աղօթել :

Իսկ խուցի բաց պատուհանից ներս էին թափուում, իրրեւ ժիր, ուրախ, ժպտող կեանքի, երջանկութեան, սիրոյ զմայլանքի արձագանգներ, աղաւնիների անդադրում մնչումները :

ԳԷՈՐԳ ԶՈՒԲՍՐ

(Վերջը յաջորդ քիւով)